# Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)

Նորարարությունների Մրցակցային Հիմնադրամ

## ԱՐԴ-ԼԱԲ

Դրամաշնորհային ծրագիր

*2015թ., դեկտեմբեր*

# Ծրագրի անվանումը

***Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացում՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ***

Ծրագրի անվանման հապավումը՝ ***ԱՐԴ-ԼԱԲ***

Ծրագրի տևողությունը՝ ***24 ամիս***

# Կոնսորցիում ծրագրի մասնակիցները

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Միկշին ՍՊԸ

Պետական բուհ

Գործարար ոլորտի ընկերություն

# Ծրագրի հիմնական նպատակը

***Ճարտարապետական և Շինարարական նյութագիտության, տեխնոլոգիաների և կոնստրուկցիաների*** *արդիական ուսումնագիտափորձարարական լաբորատոր բազայի ստեղծում, որը կնպաստի.*

- *մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործմանը*
- *ԲՈՒՀ-ի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը*

# Ծրագրի ակնկալվող արդյունքները

- Ճարտարապետական, շինարարական և ճարտարագիտական բարձրագույն մասնագիտական կրթության արդիականացում և որակի բարձրացում
- Գիտակրթական կապերի ակտիվացում ՀՀ ԲՈՒՀ-երի և ոլորտի գիտաարտադրական կազմակերպությունների հետ, ինչպես նաև այդ ուղղություններով միջազգային կապերի ընդլայնում ու զարգացում
- Շինարարական նյութերի, պատրաստվածքների, կոնստրուկցիաների ու կառույցների հետազոտման ու փորձաքննությունների և մասնագիտական խորհրդատվությունների գծով ԲՈՒՀ-ի համագործակցության ակտիվացում գործնական շինարարական ոլորտի հետ
- Կրթական ծրագրերի համապատասխանեցում ոլորտի աշխատանքային շուկայի պահանջներին

# Ծրագրի գործողությունները

**Ծրագիրն իրականացվելու է 6 փուլով՝ յուրաքանչյուրը 4 ամիս տևողությամբ: Ծրագրի իրականացումը ենթադրում է գործողություններ հետևյալ ուղղություններով**

- ***ուսումնագիտափորձարարական լաբորատորիա***յի տարածքի նորոգում, կահավորում և վերազինում
- ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի կազմավորման ընթացքում ***խորհրդատվությունների***ի կազմակերպում
- ***կրթական ծրագրեր***ի վերանայում և ներդրում
- լաբորատոր անձնակազմի ***վերապատրաստում***
- նոր ***լաբորատոր աշխատանքների***ի ձևակերպում, փորձարկում և ուսումնական գործընթացում ներդնում
- նոր ուսումնամեթոդական և դասավանդման ***գրականության*** մշակում, ձեռքբերում և կիրառում նշված դասընթացների համար

# Ծրագրի գործողությունները

•Փորձարկումների մեթոդներին, հաշվարկային, նախագծային և ուսուցման աշխատանքներին վերաբերող արդի ***ծրագրային փաթեթների*** ձեռքբերում և համակարգիչներում տեղակայում

•հանրապետության շինարդյունաբերության, շինարարական, շինվերահսկողական, բնապահպանական, արտակարգ իրավիճակների ու անվտանգության ոլորտներում առաջնահերթ նշանակություն ունեցող հետազոտական ծրագրերի ցանկի կազմում և ***շահառու կազմակերպությունների*** հետ այդ ծրագրերի իրականացման աշխատանքների պլանավորում

•նշված ոլորտներում իրավիճակային գնահատումների, ***փորձաքննության*** և վերաստուգման գործողությունների համար ***արտոնագրերի*** ձեռքբերում

# Ծրագրի բյուջեն

- ՆՄՀ-ից ակնկալվող դրամաշնորհի գումարը՝
  **243 855 428 ՀՀԴ**

- ՃՇՀԱՀ-ի համաներդրումը՝
  **35 795 292 ՀՀԴ**

- Դրամաշնորհի ընդհանուր գումարը (ներառյալ համաֆինանսավորումը)՝
  **279 650 720 ՀՀԴ**

# Ծրագրի ընթացքում նախատեսվող գնումները

**ԱՐԴ-ԼԱԲ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ գնման գործընթացները՝**

1. Լաբորատոր սարքավորումներ - միջազգային մրցակցային գնում,

2. Գրասենյակային գույք, գրենական ապրանքներ, համակարգչային տեխնիկա, կենցաղային սարքավորումներ, տպագրական աշխատանքներ - գնանշում

3. Համակարգչային ծրագրերի մշակում - կազմակերպության ընտրություն

4. Անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն - անհատ խորհրդատուի ընտրություն